

զգեստնին հաներ էին կրակը մարերու աշխատելով՝ ալ չէին գտած, որովհետեւ գողերը տարեր էին:

Այս ահաւոր հրդեհը ապականութենէ զատ մեծամեծ մասսուց ալ պատճառ եղաւ. սակայն այսու հանդերձ չարիքը աւելի մեծ ալ կրնար ըլլալ. այս միսիթարութիւնը միայն կրնանք ունենալ տեսնելով տակաւին թիւրեղեայ կիսաւեր պալատը Սիտէնհէմ բլրոյն վրայ:

Աղբիշր.

Իրեք ճամբորդներ առաւօտ մը կը պատահին աղբիւրի մը՝ օթեվանի մը մօտ: Մէկը վաճառական էր, մէկալը ծանրագլուխ ծեր մը, երրորդը գեռահասակ տղայ մը՝ որ կը վաղէր մոլորած ոչխարի մը ետևէն: Աղբիւրին աւազանին վրայ գրուած էր հին գիրերով այս արձանագրութիւնս. ինծի նմանէ: Իրեք ճամբորդները ջանացին այս բանիս նշանականութիւնը իմանալ: Նախ վաճառականը սկսաւ ըսել. Այս աղբիւրը որ կը պատրի ընդարձակ գաւառներու մէջ, կը խառնուի գետակներու, վտակներու, և վերջը վերջը մեծ զետ մը կը դառնայ, մեզի ըսել կ'ուզէ որ միշտ պէտք է աշխատիլ որով կարենանք հարստանալ: Ենթը այսպէս մեկնեց. Ես ուրիշ միաք մը կը տեսնեմ այս արձանագրութեանս մէջ. աղբիւրը ձրի կը յազեցընէ զանոնք որ կը մօտենան իր աւազանին, և իր օրինակաւը կ'ըսէ թէ պէտք է մարդուս որ օգտակար ըլլայ իր մերձաւորին: Իսկ տղան լուսթք մտիկ կ'ընէր. Երբոր հարցուցին իրեն կարծիքը՝ մէկէն պատասխանեց. Աղբիւրի մը ջուրը այն ատեն յարգ ունի՝ երբոր յստակ և մաքուր է. թէ որ աղմոտի՝ զզուելի կ'ըլլայ, և ինչուան անասուններն իսկ կը քաշուին հոն խոթելու իրենց շրթունքը. յարգ ունենալու համար՝ պէտք է մաքուր ըլլալ:

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Մեռեալ կանանց լիձու. — Ամերիկայի գարիպու գաւառուն մէջ, ուր սկըսան պեղմունքներ ըլլալ հանկերու առատութեան համար և շատ տարիններէ ՚ի վեր մեծ յառաջադիմութեան մէջ են, գանուեցաւ անապատ տեղերու մէջ լիճ մը որուն անուանակոչութեան պատմութիւնը, որ կ'երենայ թէ տխուր բան մը պիտի ըլլայ՝ գեռ յայտնի չէ, վասն զի հնդիկները կ'անուանեն այս ծովակալիճ մեռեալ կանանց:

Այս լճին երկայնութիւնը երեք կամ չորս հազար մղոն է, իսկ լայնութիւնը մէկ մղոն ու կէս. ջուրերը խիստ մաքուր և թափանցիկ են, անանկ որ ինչուան յատակը կը տեսնուի, որ հաստատուն է և բարակ աւազով մը ծածկուած: Եզերքները լի են զանազան տեսակ ծառերով, որոնց մեծ մասը սոճ և կաղամախ են: Լճին մէջ որառւած կարմրախայտ ձկները շատ համով և մեծ են. լճափունքը բնակող հնդիկները այնչափ կ'որսան ասոնցմէ, որ բուռ մը աղբիւրի տեղ կշտանալու չափ կու տան ուրիշի. շրջակայ երկիրը լճին պէս զեղեցիկ է: Հովհանոսը որկոհակ կոհակի բարձրացած է՝ զարդարեալ է փափուկ խոտով և բլուրները ծածկուած են փառաւոր ծառերով: Այս բարձրաւանդակներէն երեցած նկարավայել և ընդարձակ տեպքը՝ տեղւոյս զարմանալի զեղեցկութիւնը կը ցուցընէ. բայց թէ ինչպէս ասանկ աղոտոր լիճը տխուր անուն մառած ըլլայ, չենք կրնար ըսել: Այս ջրերուն մօտ կայ ուրիշ լիճ մալ որուն չորս կողմը, ինչպէս այս նահանգիս մէջ ամեն տեղ, արօտները պարարտ և շատ են: Պնտառներու և դաշտերու մէջ, լճերու եզերքները անբաւ բաղմութիւն կայ վայրի հաւերու որոնք զիւրամերձենալի ալ են: Կրնար նաև բաղեր, սագեր և ուրիշ ջրասուն թռչուններ որ սացուիլ, եթէ չորս կողմի ճահիճներուն պատճառաւ լճին մօտենալը անկարելի, չըլլար: Այս լճին և զեռ ու-